Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ «ԱՐԱԳԱԾ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 1895-1904 ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

ԱՐՄԷՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ
armenani@mail.ru

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ ժողովրդի նկատմամբ ցարական կառավարութեան անբարեացակամ վերաբերմունքը ԺԹ. դարավերջին յանգեցրեց արեւելահայ քաղաքական կեանքի վերելքին: Ազատագրական պայքարի աւանդական կենտրոնների կողքին դարի 90ականների սկզբներին, ի դէմս Ալեքսանդրապոլի յայտնուեց մի նոր օջախ, որը շուտով վերածուեց ոչ միայն ազգային արժէքների իսկական պահապանի ու հայ ժողովրդի երկու հատուածներն իրար կապող օղակի, այլեւ իր աշխարհագրական նպաստաւոր դիրքի ու այստեղ տեղակայուած ռուսական պետական զինապահեստների շնորհիւ առանձնայատուկ նշանակութիւն ստացաւ ԺԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի հայ ազատագրական զինեալ պայքարում: Կարճ ժամանակահատուածում քաղաքը վերածուեց դէպի երկիր անցնող զինատար ու մարտական խմբերի հաւաքատեղի ու եղաւ այն կարեւոր դարբնոցը, որտեղ իրենց մկրտութիւնը ստացան ազատագրական պայքարի նշանաւոր շատ գործիչներ:

Ա. «ԱՐԱԳԱԾ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՍՆԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ժամանակագրականօրէն առաջինը Ալեքսանդրապոլում հաստատուեց դաշնակցութիւնը: ՀՅԴ «Դրօշակ» խմբի Ալեքսանդրապոլի մասնաճիւղը հիմնուեց 1890 Յունիսին՝ Քրիստափոր Միքայէլեանի կողմից, այստեղ գործուղուած Մարտիրոս Շաթիրեանի ջանքերով: «Քար» կամ «Քարոտ» անունով կառոյցը յետագայում ստացաւ կենտրոնական կոմիտէի կարգավիճակ, իսկ նրա հիմնադիր անդամները (Թ. Խզմալեան, Աւետիք Մալոյեան, Ալեքսանդր Պետրոսեան /Պետօ/, Ենոք Գիւնջեան, Վաղարշակ Ժամակոչեան, Աւետիք Ղարիբեան /Պադուալի Վաղօ/, Տէր Խորէն Աբգարեան /Նոթաջի/) դարձան յայտնի գործիչներ՝ խոր հետք թողնելով հայ ազատամարտի պատմութեան մէջ[1]:

Մինչեւ 1895, Ալեքսանդրապոլում «Արագած» անունով իր մասնաճիւղը հիմնեց նաեւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը[2]: Մասնաճիւղի հիմնադրման ստոյգ տարեթուի եւ հիմնադիր անդամների մասին կուսակցական պատմագրութիւնը եւ ժամանակի պարբերական մամուլը տեղեկութիւններ չեն հաղորդում: Մեզ յաջողուեց պարզել միայն, որ 1895-1902՝ (մինչեւ ՀՅԴ շարքերն անցնելը[3]) «Արագած»ին անդամակցել եւ բաւականին բուռն յեղափոխական գործունէութիւն է ծաւալել բանաստեղծ Աւետիք Իսահակեանը[4]:

Մասնաճիւղը, որ կոչուած էր Երկիր գործուղուած հնչակեաններին նիւթական ու բարոյական օգնութիւն ցոյց տալու, եւ նրանց միջոցով զէնք, փող ու հանդերձանք փոխադրելու, մինչեւ Ի. դարասկիզբը վարեց խիստ աննշան գործունէութիւն: Օրինակ, Թիֆլիսի նահանգային ոստիկանական վարչութեան մի գաղտնի տեղեկագրի համաձայն՝ ստեղծման առաջին տարիներին երեկոյթների, ճաշկերոյթների եւ թատերական ներկայացումների միջոցով «Արագած»ին յաջողւում էր մէկ անգամից հաւաքել ու Թիֆլիսի հնչակեան կազմակերպութեանը փոխանցել ոչ աւելի քան 50 ռուբլի[5]:

Մասնաճիւղի գործունէութեան բուռն վերելքը սկսուեց դարասկզբին՝ պայմանաւորուած ցարիզմի հայահալած քաղաքականութեան աշխուժացմամբ[6]: 1904ին Ալեքսանդրապոլում եւ համանուն գաւառում «Արագած»ն ունէր արդէն 70 խմբերում ընդգրկուած շուրջ 6000 անդամ՝ այդ թւում քաղաքում յայտնի ու յարգարժան մարդիկ, ինչպէս օրինակ մանկավարժ, բանաստեղծ Պետրոս Մոճոռեանը, բժիշկ Ն. Տէր Սահակեանը, Համբարձում Տէր Ղազարեանը, Ցասումը, Արշալոյսը, Սէյրանը եւ ուրիշներ: Մասնաճիւղն ունէր նաեւ զինապահեստ եւ 40 հոգանոց զինեալ խումբ, որը հայ-թաթարական բախումների ժամանակ մեծ քանակութեամբ զէնք-զինամթերքով ուղարկուեց Երեւան՝ տեղի «Արարատեան» մասնաճիւղին օգնութեան[7]:

Հայ-թաթարական բախումների օրերին Թիֆլիսից Ալեքսանդրապոլ եւ Կարս գործուղուած Գործադիր Յանձնախումբի անդամ Վահան Մարսեանը (իսկական ազգանունը Ղուկասեան) բացառիկ տեղեկութիւններ է հաղորդել ալեքսանդրապոլցի հնչակեանների զէնք հայթայթելու եղանակների մասին: Ըստ Մարսեանի հնչակեան ահաբեկչական խմբերի ղեկավար Հայկ

Ամատունուն յաջողուել էր տեղի կայազօրի զինուորների եւ սպայական անձնակազմի մէջ գտնել համախոհների եւ նրանց միջոցով՝ կեղծուած բանալիներով, պահեստներից մեծ քանակութեամբ զէնք դուրս հանել[8]: Որոշ ժամանակ անց, երբ գաղտնիքը բացայայտուեց, իշխանութիւնները սկսեցին ալեքսանդրապոլցի հնչակեանների տներում եւ հաւաքատեղիներում խուզարկութիւններ կատարել, սակայն գողօնը յայտնաբերել չկարողացան: Զէնք-զինամթերքը վաղօրօք բաժանուել էր հայկական գիւղերի միջեւ, իսկ գողութեան մէջ կասկածուող զինուորականները անցել էին Թիֆլիս, ապա Բաքու եւ Պարսկաստան:

Բ. «ԱՐԱԳԱԾ»Ն ԻԲՐԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՏՆԱՀԱՐՈՒԱԾ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Իրական հեղինակութիւն ՍԴՀԿ «Արագած» մասնաճիւղին բերեց պայքարը՝ «Հայաստանեայց Եկեղեցու Գոյքի Բռնագրաւման Մասին» օրէնքի դէմ:

ԺԹ. դարավերջերին ցարիզմը որոշակի քայլերի դիմեց Հայ Եկեղեցու իրաւունքները սահմանափակելու եւ հայկական կրթալուսաւորչական հաստատութիւնների գործունէութիւնը լիովին վերահսկելու նպատակով: Տեղում այդ քաղաքականութեան իրագործողը դարձաւ իր հայատեացութեամբ յայտնի Կովկասի նորանշանակ կառավարչապետ Գրիգորի Գոլիցինը: Միքանի անյաջող փորձերից յետոյ նա կարողացաւ համոզել Նիկոլայ Բ. կայսերն՝ ընթացք տալ իր հեղինակած նախագծին[9], որը հաստատուեց եւ օրէնքի ուժ ստացաւ 1903 Յունիսի 12ին: Ըստ այդմ՝ Հայ Եկեղեցուն պատկանող ամբողջ անշարժ գոյքը, աւանդները, ինչպէս նաեւ օրէնքի ընդունումից յետոյ նուիրատուութիւնների եւ կտակների ձեւով եկեղեցուն տրուող գոյքն ու նիւթականը, եկեղեցու տնօրինութիւնից անցնում էին պետական համապատասխան նախարարութիւնների տնօրինութեանը:

Օրէնքն ամբողջութեամբ ուղղուած էր հայ ժողովրդի եւ հայ մշակոյթի դէմ: Դա արտակարգ պատժամիջոց էր մի ժողովրդի նկատմամբ, որի միակ պաշտօնական ներկայացուցիչը եկեղեցին էր:

1903 Յուլիսին, օրէնքը՝ որոշ կրճատումներով, հրապարակուեց *Մուրճ* ամսագրում[10], ապա ամբողջութեամբ՝ *Արարատի* Օգոստոս-Սեպտեմբերի միացեալ համարում[11] եւ առաջ բերեց

աշխարհասփիւռ հայութեան ընդվզումն ու արդարացի ցասումը: Տեղի ունեցածը «պաշտօնական աւազակութիւն» բնութագրած *Հնչակ* պարբերականն այս առթիւ գրել է. «*Թագակիր Աւազակապետ Նիկոլա Բ-ի քաղաքագիտական ապուշութիւնից բղխած հրամանը... անսպասելի էր Ռուսահայ հասարակական գործիչների համար*»[12]: Երեւանում, Ախալքալաքում, Գանձակում, Թիֆլիսում, Բաքուում եւ Անդրկովկասի հայաշատ այլ քաղաքներում տեղի ունեցան բազմահազարանոց ցոյցեր: Տեղ-տեղ դրանք ուղեկցուեցին բնակչութեան, ոստիկանութեան եւ զօրքի միջեւ արիւնալի ընդհարումներով[13]:

Ըմբոստութեան առաջին ազդանշանը տուեց Ալեքսանդրապոլը: «*Արդէն յունիսեան հրամանի հրապարակման առաջին օրերէն քաղաքը կորսնցուցեր էր իր բնականոն կերպարանքը եւ արտակարգ յուզման մէջ էր: Տրամադրութիւնները բարձր էին եւ ժողովրդական ցասումը յարմարագոյն առիթի միայն կը սպասէր բռնկելու համար*»՝ գրում է Միքայէլ Վարանդեանը[14]: Եւ առիթը շուտով ներկայացաւ: 1903 Յուլիսի 29ին ամենայն հայոց կաթողիկոսը, Գոլիցինի հետ բանակցելուց յետոյ, Յովհաննէս եւ Սարգիս եպիսկոպոսների ու Կորիւն վարդապետի ուղեկցութեամբ Թիֆլիսից եկաւ Ալեքսանդրապոլ՝ այստեղից Էջմիածին անցնելու համար[15]: Ծերունազարդ հովուապետի յայտնուելը անակնկալի բերեց ալեքսանդրապոլցիներին[16]: Հնչեցին քաղաքի եկեղեցիների զանգերը, փակուեցին բոլոր խանութները, առաջնորդարանի մօտ հաւաքուած 15,000անոց բազմութիւնը կաթողիկոսին տեսնելուն պէս իրար անցաւ՝ գոչելով «*Հայրի՜կ, Հայրի՜կ, մի՛ յանձնիր կալուածները, մերժի՛ր, բողոքի՛ր, մի վհատիր, մենք քեզ հետ ենք...*»[17]: Տեղի հնչակեանները փորձեցին տարերայնօրէն սկսուած շարժմանը կազմակերպուած բնոյթ տալ, սակայն յաջողութեան չհասան: Կաթողիկոսական կառքը շրջապատած ամբոխը ուղեկցեց նրան մինչեւ կայարան: Իսկ երբ գաւառապետի օգնականը փորձեց բարձրանալ հայրապետի կառքը, ժողովուրդը - յայտարարելով թէ «աղտոտներուն տեղը չէ» - նրան դուրս շպրտեց ու ոտնատակ տուեց, ապա «*կառքը, կաթողիկոսը մէջին, ձեռքերի վրայ պահած, աղաղակելով, ճառերով եւ կառավարութեան հասցէին ուղղած հայհոյանքներով մինչեւ երկաթուղու կայարան տարաւ*»: Կայարանում դրութիւնը դարձաւ օրհասական: Գրգռուած ամբոխը սկսեց քարեր նետել ոստիկանների վրայ, կոտրեց

գնացքի ապակիները եւ նոյնիսկ յարձակուեց կաթողիկոսի թիկնապահ եպիսկոպոսների վրայ[18]:

Դեռ Ալեքսանդրապոլում կրքերը չէին հանդարտուել, երբ բողոքի ելոյթներ սկսուեցին Մեծ Ղարաքիլիսայում: Օգոստոսի 31ին գիւղի հասարակական զբօսայգում հաւաքուած ժողովուրդը սկսեց հակակառավարական ճառեր հնչեցնել ու յեղափոխական երգեր երգել: Յաջորդ օրը մօտ 7-8000 ցուցարարներ հաւաքուեցին եկեղեցու մօտ՝ իշխանութիւնների հասցէին կրկին հնչեցին սպառնալիքներ: Հրացաններով, ատրճանակներով եւ դաշոյններով զինուած ցուցարարները երդուեցին կեանքի գնով պաշտպանել եկեղեցին[19]:

Ալեքսանդրապոլի եւ Մեծ Ղարաքիլիսայի դէպքերը մեծ ազդեցութիւն թողեցին իշխանութիւնների վրայ: Երեւանում եւ Թիֆլիսում լուրեր տարածուեցին, թէ ալեքսանդրապոլցիները պատրաստ են զէնքի ուժով պաշտպանել եկեղեցին: Չցանկանալով իրավիճակն առաւել թէժացնել, եկեղեցական գոյքն ընդունող յանձնաժողովը քաղաք ժամանեց միայն Հոկտեմբերի 5ին, երբ կրքերը համեմատաբար հանդարտուել էին:

Ռուս պաշտօնեաներին Ալեքսանդրապոլն ընդունեց խիստ սառը: Հոկտեմբերի 6ին քաղաքի խանութներն ու արհեստանոցները փակուեցին, չէին աշխատում նոյնիսկ կառապանները, իսկ գլխաւոր փողոցներում ծածանւում էին տարբեր մակագրութիւններով սեւ դրօշներ: Օրինակ ոստիկանատան կտուրին կանգնեցուած դրոշակն ունէր «Ամօթ է կողոպտել» մակագրութիւնը, իսկ քաղաքային դումայի շէնքի կտուրին կանգնեցուածը՝ «Ամօթ եւ նախատինք կառավարութեանը» վերտառութիւնը[20]: Գոյքն ընդունող յանձնաժողովի նախագահ՝ Երեւանի փոխնահանգապետ իշխան Միխաիլ Նակաշիձէի հրաւէրով ժամանած Ալեքսանդրապոլի փոխանորդ Սահակ վարդապետ Բաղդասարեանը հրաժարուեց եկեղեցական կալուածքները յանձնել եւ նոյնիսկ տեղը ցոյց չտուեց, յայտարարելով, թէ ամենայն հայոց հայրապետից դրանք չյանձնելու հրաման ունի, իսկ «*կալուածների տեղերը ցոյց տալ՝ միեւնոյն է թէ յանձնել*»[21]:

Գոլիցինի մահափորձին հեղինակները
Շանթ, Փայլակ, Կայծակ
(*Հնչակ*, Փարիզ, Դեկտ. 1904, էջ 112)

Հոկտեմբերի 7ին, յանձնախումբը տեղական ռուս պաշտօնեաների մասնաւոր կառքերով (քաղաքի կառապաններից եւ ոչ մէկը իշխանութիւնների հետ չգործակցեց), շրջեց քաղաքում եւ սեփական ցուցակների օգնութեամբ եկեղեցական միքանի խանութներ ցուցակագրեց, բայց բռնագրաւել չհամարձակուեց:

Աւելին՝ ցանկանալով մասնաւոր բնոյթ տալ, իշխանութիւնները տեղի ունեցածի մեղքը բարդեցին առանձին անհատների վրայ: Խռովութեան անյաջող փորձ կազմակերպելու մեղադրանքով Ալեքսանդրապոլ քաղաքի եւ հարեւան Մեծ Դուզքենդ գիւղի երեք բնակիչների նկատմամբ քրէական հետապնդում սկսուեց: Դատավարութիւնը տեղի ունեցաւ յուլիսեան դէպքերից ութ ամիս անց՝ 1904 Մարտի 20-22ին եւ անցկացուեց դռնփակ (դատարանի նախագահ՝ Բոկալօ, անդամներ՝ Մատուսեւիչ, Եակուբենկօ, դատախազ՝ Գլագոլեւ, դատապաշտպաններ՝ Խոմենտովսկի, Յովհաննիսեան, Թիֆլիսից հրաւիրուած Խատիսեան եւ Մոսկուայից հրաւիրուած Մուրաւիով): 1903 Նոյեմբերի 15ին կազմուած մեղադրական եզրակացութեան հիման վրայ պետական մեղադրողը դատարանից պահանջեց Քրէական Օրէնսգրքի 264 յօդուածի համաձայն մեղադրեալներին դատապարտել տաժանակիր աշխատանքների՝ 12-15 տարի ժամկէտով: Ըստ մեղադրող կողմի, Ալեքսանդրապոլի բնակիչ՝ պահեստի ենթասպայ 27ամեայ Հայկ Ամատունին, նոյն քաղաքի բնակիչ՝ 22ամեայ Սիմոն Յարութիւնեանը եւ Մեծ Դուզքենդ գիւղի քահանայ՝ 33ամեայ Տէր Յովհաննէս Յովհաննիսեանցը, գործով չպարզուած այլ անձանց

հետ, 1903 Յուլիսի 29ին Ալեքսանդրապոլ քաղաքում փորձել էին ուժի գործադրմամբ ստիպել ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեանին չկատարել 1903 Յունիսի 12ի հայ-լուսաւորչական եկեղեցու ունեցուածքը համապատասխան նախարարութիւններին փոխանցելու մասին բարձրագոյն հրամանը: Այդ նպատակով մեղադրեալները իրենց կողմից կառավարուող ամբոխն ուղղորդել էին կաթողիկոսի եւ նրան «պաշտպանող» ոստիկանների դէմ: Արդէն կայարանում մեղադրեալներ Ամատունին եւ Յարութիւնեանը քարերով կոտրել էին վագոնի ապակիները, ապա ծեծի ենթարկել կաթողիկոսին ժողովրդից պաշտպանող գաւառապետի օգնական Պալովին եւ ոստիկանապետ Զենկոյին, իսկ Տէր Յովհաննէս քահանան յարձակուել էր Խրիմեանին ուղեկցող վարդապետի վրայ ու քաշքշել սրա մօրուքից:

Ժողովրդական տարերային ելոյթն իբրեւ կազմակերպուած յանցագործութիւն ներկայացնելու մեղադրող կողմի գործադրած ջանքերն անցան ապարդիւն: Դատարանը չհամարձակուեց երիտասարդներին տաժանակիր աշխատանքների դատապարտել: Կատարուածը վերաորակաւորելով իբրեւ հասարակական կարգի խախտում, Երեւանի Նահանգային Դատարանը Ամատունուն եւ Տէր Յովհաննէս քահանային դատապարտեց ութ, իսկ Յարութիւնեանին վեց ամսուայ բանտարկութեան[22]:

Տարերայնօրէն սկսուած ցոյցերի համեմատ, ցարիզմի հայատեաց դրսեւորումների դէմ պայքարի առաւել գործուն միջոց դարձաւ ռուս պաշտօնեաների եւ նրանց կամակատարների ահաբեկումը, որ իրագործուեց ազգային կուսակցութիւնների տեղական կառոյցների կողմից եւ որի գագաթնակէտը դարձաւ մահափորձը՝ Կովկասի կառավարչապետի դէմ:

Հայ վրիժառուի առաջին հարուածն իր հասցէատիրոջը գտաւ հենց Ալեքսանդրապոլում: 1903 Օգոստոսի 12ի կէսօրին, մի խումբ հնչակեաններ, Լորիս-Մելիքով փողոցում դաշոյնի հարուածներով սպանեցին ռուս աւագ քահանայ Վասիլեւին, եւ ծանր վիրաւորեցին Գարդմանով անունով մի ոստիկանի[23]: Այդ տարիներին ՍԴՀԿ Ալեքսանդրապոլի «Արագած» մասնաճիւղի վարչութեան քարտուղար Պետրոս Մոճոռեանն իր յուշերում գրում է, թէ կառավարչապետի թողտուութեամբ յունադաւան այս հոգեւորականն Ալեքսանդրոպոլի գաւառի Ղարաքիլիսա, Աղին եւ Բուղդաշէն գիւղերի բնակչութեան կէսին խոստումներով ու

կաշառքով դաւանափոխ էր արել[24]: Այն բանից յետոյ, երբ հաւատավաճառները ստացել էին գիւղերի ամենաբերրի հողերը, միեւնոյն ազգի երկու տարբեր դաւանանքի պատկանող գիւղացիների միջեւ սկսուել էին կռիւներ, երկպառակութիւններ եւ նոյնիսկ մարդասպանութիւններ[25]: «*Վասիլեւ քահանայի... անսանձ ու լկտի արարմունքներին դէպի հայ ժողովրդի սրբութիւնները, մենք մատների արանքով նայել չէինք կարող,*- գրում է Մոճոռեանը,- *եւ ահա, Հնչակեան Ս-Դ կուսակցութեան Ալեքսանդրապոլի վարչութիւնը, հետեւեալ կազմով՝ Յարութիւն Զաքարեան, Համբարձում Տէր-Ղազարեան, Յակոբ Էլբակեան եւ Պետրոս Մոճոռեան, 1903 թուի Օգոստոսի 10ին որոշում կայացրին՝ վերջ դնել Վասիլեւ քահանային՝ Գոլիցինի այդ անձնուէր եւ եռանդուն արբանեակին*»[26]:

Մեր կարծիքով ռուս քահանայի ահաբեկման իրական պատճառն ամէնեւին էլ հաւատորսութիւնը չէր:

Գաղտնիք չէ, որ շուրջ մէկ դար շարունակուող վերաբնակեցման քաղաքականութեան ձախողումից յետոյ Անդրկովկասը ձուլելու հրատապ խնդիրը ցարիզմը փորձեց լուծել երկրամասի ժողովրդների եւ յատկապէս հայերի շրջանում ուղղափառ կրօնը տարածելու միջոցով: Իշխանութիւնները տեղեակ էին հայ գիւղացու սակաւահող վիճակին եւ որոշապէս գիտէին այն վայրերը, որտեղ հողի նեղուածութիւնը ծայրայեղ չափերի էր հասել: Ալեքսանդրապոլի գաւառում այդ գիւղերի թիւը երեքն էր՝ Փոքր Ղարաքիլիսա, Աղին եւ Բուղդաշէն[27]: Սակայն հաւատորսութեան քաղաքականութիւնը գոնէ Ալեքսանդրապոլի գաւառում գլխովին ձախողուեց: Նոր դաւանանքը հայ գիւղացու կողմից ընդունւում էր առերես՝ միայն հողային կարիքները բարելաւելու համար: 1908 Յունուարի 15ին Երկրագործութեան եւ Պետգոյքերի Վարչութեանն ուղղած թիւ 217 զեկուցագրում Երեւանի նահանգապետ կոմս Վլադիմիր Տիզենհաուզէնն այդ մասին գրում է. «... *Հայերի կողմից ուղղափառութիւն ընդունելու իսկական դրդապատճառն այդ ճանապարհով իրենց համար լաւագոյն հողապահովութիւն ստեղծելն է, իսկ նպատակին հասնելուց յետոյ, նրանք կրկին վերադառնում են լուսաւորչական (հայ առաքելական - Ա.Հ.) եկեղեցու գիրկը*»[28]:

Իշխանութիւնները քաջատեղեակ էին, օրինակ, որ Փոքր Ղարաքիլիսայից անջատուած Ալեքսանդրովկա գիւղակում

հաստատուած համարեա բոլոր ծխերն իրենց ընտանիքների մի մասը թողել էին մայր համայնքում, ընտանեկան ու տնտեսական կապերը չէին կտրել նրանցից, եւ ուրեմն խզումը միտումնաւոր էր ու արհեստական: Աւելին, 1896ին կազմուած մի գիւղացուցակից երեւում է, որ Ալեքսանդրովկայում հաստատուած 20 ընտանիքը նոյնիսկ լրիւ կազմով ուղղափառութիւն չէր ընդունել՝ 119 մարդուց 79ը նորադաւան էին, 40ը՝ հայ առաքելական[29]: Բուղդաշէնում ընդհանրապէս ուղղափառութիւն ընդունած 11 ընտանիքից 10ը հողային պահանջները բարելաւելուց յետոյ կրկին վերադարձել էր նախկին դաւանանքին[30]:

Այս եւ տասնեակ այլ փաստերը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ ռուս քահանայի ահաբեկման իրական պատճառը նրա վերաբերմունքն էր դէպի հայ ժողովուրդը եւ այն պարծենկոտ յայտարարութիւնը, թէ «*մօտ ապագայում Ալեքսանդրապոլի մայր եկեղեցում յունադաւան պատարագ պիտի տայ*»[31]: Աւելին, հակուած ենք ենթադրելու, որ ալեքսանդրապոլցի հնչակեանների համար Վասիլեւի ահաբեկումը նաեւ փորձ էր, իր ծաւալներով անհամեմատ աւելի մեծ ու յանդուգն մի ծրագրի՝ Գոլիցինի դէմ մահափորձի կազմակերպումից առաջ:

ԳՈԼԻՑԻՆԻ ԴԷՄ ՄԱՀԱՓՈՐՁԸ

Կովկասի կառավարչապետն իր հայատեացութեամբ աչքի էր ընկել պաշտօնը ստանձնելու առաջին իսկ օրուանից, երբ ծրագրել էր հայ-վրացական ընդհարումներ կազմակերպել: «*Ես այդ տարիներում ապրում էի Թիֆլիսում*,- գրում է Մոճոռեանն իր յուշերում,- *եւ յիշում եմ այն ցնցող տանջանքներն ու յոյզերը, որ կրում էր հայ մտաւորականութիւնը, այդ անօրինակ եւ անգութ լուրերի ազդեցութեան տակ*»[32]: Աբդուլհամիդեան զուլումի օրերին Գոլիցինը պետական խորհրդի քննարկմանն էր ներկայացրել մէկ այլ հրէշաւոր ծրագիր՝ «*հայերին ամբողջապէս տեղահան անելու եւ Սիբիր տեղափոխելու մասին*»[33], որը եւս չիրագործուեց:

Հայ ժողովրդի դէմ նիւթած իր դաւերի համար Ալեքսանդրապոլի հնչակեան մասնաճիւղը դեռեւս 1902ին որոշել էր ահաբեկել նրան, բայց վախենալով հետեւանքներից այդ ծրագրից առժամանակ հրաժարուեց[34]: Հակահայ կառավարչապետի ահաբեկման հնչակեան ծրագիրը նորից արդիական դարձաւ Հայ Առաքելական Եկեղեցու գոյքի բռնագրաւման մասին օրէնքի ընդունումից յետոյ:

1903 Օգոստոսի 16ին ՍԴՀԿ Ալեքսանդրապոլի «Արագած» մասնաճիւղը Յարութիւն Զաքարեանի նախագահութեամբ (գանձապահ՝ Տէր Ղազարեան, վարչութեան քարտուղար՝ Պետրոս Մոճոռեան եւ վարչութեան անդամ Յակոբ Էլբակեան) որոշում ընդունեց «*իր կատարած անբաւ չարիքների համար տեռորի ենթարկել Գալիցինին*»[35]: Ձեռնարկի նիւթական կողմի ապահովումն իր վրայ վերցրած Բաքուի կոմիտէն կազմակերպչական աշխատանքները ղեկավարելու համար Ալեքսանդրապոլ գործուղեց Փարամազին (Մատթէոս Սարգիսեան): Միքանի օր անց կազմաւորուեց նաեւ երեք արեւմտահայ երիտասարդներից բաղկացած ահաբեկչական խումբը[36]:

Ահաբեկումը տեղի ունեցաւ 1903 Հոկտեմբերի 14ին՝ Թիֆլիսից Կոջոր տանող ճանապարհին: Յարձակուելով Գոլիցինի կառքի վրայ ահաբեկիչները թունաւորուած դաշոյնների չորս հարուածներ հասցրեցին նրան եւ կարծելով թէ սպանուած է՝ դիմեցին փախուստի: Սակայն, ըստ պաշտօնական վարկածի՝ կոզակների հետ սկսուած փոխհրաձգութեան ժամանակ սպանուեցին[37]: Մէկ այլ տեսակէտի համաձայն, որը մեր կարծիքով առաւել ճշմարտամօտ է, ոստիկանների կողմից շրջապատուած Սարգիսն ու Պօղոսը՝ «*տեսնելով, որ այլեւս ազատուելն անհնար է, ընդունում են իրենց մօտ պատրաստի պահած թոյնը եւ հիւանդանոց տեղափոխուելու ճանապարհին մահանում*»[38], իսկ Միերին յաջողւում է փախչել[39]:

Իշխանուհի Մարիա Ֆիոդորովնայի, ենթասպայ Սիպլիւենկոյի եւ կառապանի անձնազոհ գործողութիւնների շնորհիւ հայատեաց կառավարչապետը ողջ մնաց[40]: Վէրքերը խորը չէին եւ ֆիզիկապէս նա շատ արագ ապաքինուեց, բայց «*հոգեպէս մշտական ահ ու դողի մէջ կը սկսի ապրիլ…*»[41]: Մանաւանդ որ իշխանութիւններին այդպէս էլ չյաջողուեց պարզել ո՛չ մահափորձի կազմակերպիչների, եւ ո՛չ էլ ահաբեկիչների անձը: 1905 Յունուարի 1ին կիսախելագար կառավարչապետը պաշտօնանկ արուեց, իսկ եւս եօթ ամիս անց՝ 1905 Օգոստոսի 1ին վերադարձուեց Հայ Առաքելական Եկեղեցուց այնքան դժուարութեամբ բռնագրաւուած գոյքը:

Հոկտեմբերի 14ի ահաբեկչութիւնը ցնցող տպաւորութիւն թողեց ողջ կայսրութեան մէջ: Գոլիցինը պատժուեց, քանի որ փորձում էր վերջ տալ հայ ժողովրդի գոյութեանը Կովկասում, կարծելով թէ «*հայը հաջել եւ ոչ խածել գիտէ*»: «*Թէեւ կենդանի, բայց այժմ*

բարոյապէս մեռած,- գրում էր *Հնչակը*,- *տառապում է «երկրորդ ցարը»*, որ... աշխատում էր խլել հայի ունեցած վերջին սեփականութիւնը[42]:

Ուշագրաւ է, որ հայ ժողովրդի համար բախտորոշ այդ պահին, երբ անհրաժեշտութիւն կար մէկ ընդհանուր ճակատով ներկայանալու, քաղաքական որոշ ուժեր՝ օգտուելով տիրող ընդհանուր լռութիւնից ու անորոշութիւնից, փորձեցին տեղի ունեցածը ներկայացնել իբրեւ իրենց մտայղացումը եւ սկսեցին հանգանակութիւններ կազմակերպել: Ինչը ստիպեց *Հնչակ* պարբերականին ահաբեկչութեան մէկամեակի կապակցութեամբ հետեւեալ յայտարարութիւնը տալ. «*Հնչակեան Կուսակցութեան Կովկասեան մի քանի Մասնաճիւղերը խնդրում են մեզնից յայտարարել, թէ այլ եւ այլ կուսակցութիւններ, այդ տեռորական գործը ներկայացնելով իբրեւ իրանց, այս ամբողջ տարին չարաչար շահագործեցին հասարակութեան դիւրահաւանութիւնը: Նոյն Հնչակեան Մասնաճիւղերն այսօր գալիս են վերջապէս բողոքելու այդ շահագործութեան դէմ, որ շատ երկար տեւեց, միանգամայն անհրաժեշտ համարելով այդպիսով իրողութիւնը դնելու իր պատմական ճշմարտութեան շրջանակում*»[43]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

ՍԴՀԿ Ալեքսանդրապոլի «Արագած» մասնաճիւղի շուրջ տասնամեայ գործունէութեան պատմութեան մասին պէտք է նշել թէ 1890ականների կէսերին ստեղծուած մասնաճիւղը հայթաթարական բախումների նախօրէին դարձաւ բաւականին լուրջ մի կառոյց, որը ահաբեկչական գործունէութիւնից զատ դրամական ու ռազմական բնոյթի մեծ ներդրում ունեցաւ Ի. դարասկզբի հայ ազգային ազատագրական պայքարում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Մանրամասն տե՛ս՝ Ն. Հանգոյց, «Մ. Շ-ի Յուշերը, Հայոց Հասարակական Շարժումների Պատմութիւնից», *Հայրենիք Ամսագիր*, Պոսթըն, 1923, Ա. տարի, թիւ 5, Մարտ, էջ 37-39:

[2] Գ. Յովհաննիսեան, *Հնչակեան Կուսակցութեան Պատմութիւն (1887-1915թթ.)*, Երեւան, Պատմութեան Ինստ., 2012, էջ 47:

[3] Ա. Շամլեան, «Աւետիք Իսահակեան. Գուսանների Գուսանը, Ծննդեան Վաթսունամեակի Առթիւ», *Հնչակ Ամսաթերթ*, Պրաւիտենս, 1936, թիւ 15, Մարտ, էջ 12-15:

[4] Հակակառավարական գործունէութիւն ծաւալելու, արտասահմանից արգելուած գրականութիւն ներմուծելու եւ տարածելու, ահաբեկչական բնոյթի գործողութիւններ ծրագրելու եւ կազմակերպելու մեղադրանքով Աւետիք Իսահակեանը Շիրվանզադէի, Ղազարոս Աղայեանի, Ատրպետի ու հնչակեան միքանի այլ գործիչների հետ իշխանութիւնների կողմից 1895ին ձերբակալուել է եւ նետուել Թիֆլիսի Մետէխի բանտ (*Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան (1887-1962թթ.), Հտր. Ա*, խմբ. Ա. Կիտուր, Պէյրութ, Տպ. Շիրակ, 1962, էջ 254:)

[5] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 1456, ցուցակ **2,** գործ 19, թ. 2:

[6] Կ. Ալեքսանեան, «Պետրոս Մոճոռեանի Յուշերը Կովկասի Կառավարչապետ Գրիգորի Գոլիցինին Ահաբեկելու Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2010, N 1, էջ 124:

[7] *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան*, էջ 423-424:

[8] *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան*, էջ 425: Ի դէպ, այս կերպ էր զինուել նաեւ հայ-թաթարական բախումների նախօրէին Արեւմտեան Հայաստան անցած խմբապետ Բաբկէնի «Արծիւ» խումբը:

[9] Հայ Եկեղեցու գոյքի բռնագրաւման մասին օրէնքի նախագիծը Գոլիցինի կողմից կառավարութեանը ներկայացուեց նախ 1899 Մարտին, ապա 1900 Մայիսին եւ մերժուեց Ֆինանսների նախարար Ս. Վիտտէի եւ Արտաքին Գործերի նախարար Մ. Մուրաւիովի կողմից տրուած բացասական եզրակացութիւնների շնորհիւ: Ըստ Վիտտէի՝ ոտնձգութիւնը Հայ Եկեղեցու շարժական եւ անշարժ գոյքի նկատմամբ կարող էր անհարկի յուզումներ առաջացնել աշխարհասփիւռ հայութեան մէջ (Է. Կոստանդեան, *Մկրտիչ Խրիմեան. Հասարակական-Քաղաքական Գործունէութիւն,* Երեւան, Պատմութեան Ինստ., 2000, էջ 404. նաեւ, նոյնի՝ *Հայագիտական Ուսումնասիրութիւններ*, Երեւան, Պատմութեան Ինստ., 2013, էջ 201-202):

[10] «Բարձրագոյն Հրաման Հայ-Լուսաւորչական Եկեղեցու Կալուածների Մասին», *Մուրճ Ամսագիր*, Թիֆլիս, 1903, N 7, Յուլիս, էջ 200-204:

[11] «Պաշտօնականք», *Արարատ Ամսագիր*, Վաղարշապատ, 1903, ԼԶ. տարի, N Թ-Ը /Օգոստ.-Սեպտ./, էջ 675-692:

[12] «Աւազակային Հրամանը», *Հնչակ Ամսաթերթ*, Լոնդոն, 1903, տասնեւվեցերորդ տարի, թիւ 9-10, Դեկտեմբեր, էջ 70:

[13] «Պաշտօնական Հաղորդագրութիւն», *Մուրճ*, Թիֆլիս, 1903, N 9, Սեպտեմբեր, էջ 213-218:

[14] Մ. Վարանդեան, *Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1992, էջ 277:

[15] «Եկեղեցի Հայաստանեայց, Մայր Աթոռ», *Արարատ*, Վաղարշապատ, 1903-ՌՅԾԲ, ԼԶ. տարի, Յուլիս, Հտր. Է, էջ 609:

[16] ՍԴՀԿ պաշտօնական տեսակէտի համաձայն, ժամանակ շահելու եւ ժողովրդական դիմադրութիւն կազմակերպելու համար Թիֆլիսի հնչակեան մարմինը Խրիմեան կաթողիկոսին խորհուրդ է տուել միքանի օրով էջմիածնից բացակայել եւ որպէսզի ժողովրդական պայքարը տարերային բնոյթ ստանայ, իր այս ծրագրերի մասին չէր տեղեկացրել մասնաճիւղերին (*Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան*, էջ 421):

[17] Վարանդեան, էջ 278:
[18] Արաբ, «Նամակ Կովկասից», *Երիտասարդ Հայաստան*, Բոստոն, 1903, թիւ 21, 26 Սեպտեմբեր, էջ 165:
[19] Կ. Մանդակունի, «Դէպի Կռիւ», *Հայրենիք*, Պոսթըն, 1934, տասնեւերկրորդ տարի, թիւ 7, Մայիս, էջ 107:
[20] Նոյն, էջ 89:
[21] Նոյն:
[22] «Մի Դատ», *Հնչակ*, Լոնդոն, 1904, տասնեւեօթերորդ տարի, թիւ 4-5, Ապրիլ-Մայիս, էջ 31:
[23] «Տերրօրներ», *Հնչակ*, Լոնդոն, 1903, տասնեւվեցերորդ տարի, թիւ 9-10, Դեկտեմբեր, էջ 79:
[24] ՀԱԱ, ֆոնդ 1456, ցուցակ 2, գործ 24, թ. 2:
[25] Նոյն:
[26] Նոյն, թ. 3:
[27] *Полное Собрание Законов Российской Империи* (Ռուսական Կայսրութեան օրէնքների ամբողջական ժողովածու), *Հպր. 27*, Ս. Պետերբուրգ, Տպ. Նորին Կայսերական Մեծութեան գրասենեակի երկրորդ բաժանմունք, 1848, փաստաթուղթ թիւ 22149, էջ 875:
[28] ՀԱԱ, ֆոնդ 269, ցուցակ 1, գործ 2653, թ. 3:
[29] ՀԱԱ, ֆոնդ 269, ցուցակ 1, գործ 1989, թ. 51-53:
[30] Նոյն, թ. 54:
[31] «Տերրօրներ», էջ 79:
[32] ՀԱԱ, ֆոնդ 1456, ցուցակ 2, գործ 24, թ. 1: Ուղղագրութիւնը փոխել ենք:
[33] Նոյն, թ. 2:
[34] Նոյն, թ. 5:
[35] ՀԱԱ, ֆոնդ 1456, ցուցակ 2, գործ 24, թ. 6: Կառավարչապետին ահաբեկելու որոշում Օգոստոսի սկզբներին ընդունել էր նաեւ ՍԴՀԿ Կարսի մասնաճիւղը: Սակայն, չունենալով համապատասխան դրամական եւ նիւթական հնարաւորութիւններ կարսեցիները՝ բանից անտեղեակ, օգնութիւն էին խնդրել «Արագած»ից:
[36] Նախապէս ահաբեկիչները հինգն էին՝ Բիթլիսի Վիլայէթի Բուլանըխի շրջանի Թեղուտ գիւղից Սարգիսը, Լորիսը, Սիմոնը, Պօղոսը եւ Մշոյ Ցրօնք գիւղից Միերը: Կուսակցութիւնը պարտաւորուել էր ահաբեկիչների ընտանիքներին փոխանցել 1500ական ռուբլի, նրանց բարեկեցիկ կեանքն ապահովելու համար: Ինչ-ինչ պատճառներով ահաբեկման նախօրէին խմբի անդամներից մնացին երեքը՝ Միերը, Սարգիսը եւ Պօղոսը (Ալեքսանեան, էջ 124-125:)
[37] «Ներքին Տեսութիւն. Կովկասի Կառավարչապետի Կեանքի Դէմ Սպանութեան Փորձը», *Մուրճ*, Թիֆլիս, 1903, N 10, Հոկտեմբեր, էջ 212:
[38] ՀԱԱ, ֆոնդ 1456, ցուցակ 2, գործ 24, թ. 9:
[39] *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան*, էջ 419: Փախուստից յետոյ Միերը հնչակեանների աջակցութեամբ անցնում է Պարսկաստան եւ 1906ին Թաւրիզում սպանւում դաշնակցականների կողմից (ՀԱԱ, ֆոնդ 1456, ցուցակ 1, գործ 114, թ. 1): Միեր Մանուկեանը 1894ին մտնելով Հնչակեան Կուսակցութեան շարքերը՝ կռուել էր Ալիզոնանցի Լեւոնի խմբում («Միեր Մանուկեան», *Հնչակ*, Փարիզ,

1906, տասնեւիններորդ տարի, թիւ 7, Յուլիս, էջ 69-70):

[40] Իշխանուհին մտերիմներին պատմել էր, թէ «*յարձակուողները այնպիսի ջենտլ-մէն մարդիկ էին, որ ոչ միայն ինձ չխփեցին ձեռքերում բռնած դաշոյններով, երբ ես ամէն կերպ պաշտպանում էի իմ ամուսնու կեանքը, այլ մինչեւ իսկ ինձ ցաւեր պատճառող հարուածներ չտուին*» («Ներքին Տեսութիւն. Կովկասի Կառավարչապետի», էջ 210-211):

[41] *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան*, էջ 419:

[42] «Պատմական Օրը», *Հնչակ*, Լոնդոն, 1903, տասնեւվեցերորդ տարի, թիւ 9-10, Դեկտեմբեր, էջ 79:

[43] *Հնչակ*, Փարիզ, 1904, N 12, տեսնեւեօթերորդ տարի, Դեկտեմբեր, էջ 119:

THE *ARAGATS* CHAPTER OF THE SOCIAL DEMOCRAT HUNCHAK PARTY (SDHP) IN ALEXANDRAPOL, 1895-1904

(Summary)

ARMEN HAYRAPETYAN
armenani@mail.ru

The tense reactivation of the SDHP *Aragats* Chapter of Alexandrapol and its environs, in the mid-1890s was triggered by the anti-Armenian policy of Tsarist Russia. The Chapter had 6000 members listed in 70 groups, and a 40-member-strong paramilitary group. The Chapter's popularity and reputation rose significantly due to the vigorous struggle it launched against the Tsarist "Law on the Confiscation of the Property of the Armenian Church". This act of expropriation aroused indignation among the Armenians, since the Armenian Church was perceived as the main Armenian institution safeguarding Armenian interests in Eastern Armenia.

The first mass demonstrations led by the Hunchaks took place in Alexandrapol. Masses rallied in other Armenian-populated towns of Transcaucasia too. The state reacted by conducting a spate of intimidating acts.

The Chapter counter-acted by assassinating a Russian priest, Vasilyev, who was accused of converting Orthodox Armenians to the Russian Church. The assassination was the result of a decision taken by the inner circle of the Chapter on August 12, 1903.

The assassination was followed by a more daring decision, to kill Prince G. Golitsyn, the governor of the Caucasus, who headed the anti-Armenian state policy. A party-member volunteer by the name of Harutyun Zakaryan was to head the assassins, and the decision was executed on October 14, 1903. Three Hunchak hitmen attacked the governor with poisoned daggers on his way from Tbilisi to Kojor. Badly injured, the governor survived the attack, yet suffered mental illness.

Eventually, on January 1, 1905 Golitsyn was dismissed and on August 1, the notorious anti-Armenian law of Armenian Church property confiscation was annulled.